№ 37 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 37

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ" ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը" կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի" բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 4 ֆրանք:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետեւեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և Թղթակցութիւններ հետեւեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH".

Բաժանորդագրութիւնը կարող են գրուել Թաւրիզում Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Այրէսեանցի մօտ, Արտաքիլում Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Ջուղայում Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում պ. Կ. Զէյթունեանի մօտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ռաշտից. նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. „Դէյլի Նիւզ" լրագրի կարծիքը. Արտաքին լուրեր. — Բանասիրական Մանուկների ծիւրման պատճառներից մէկը.—Յայտարարութիւններ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

—

2 Սեպտեմբերի 1894

„Շաւիղի" 32 թւում հրատարակուած պ. Տ. Յովսէփեանի քննադատութիւնը ինձ առիթ է տալիս խնդրել ձեզանից որ բարի գտնուիք տեղ տալ մի քանի նկատողութիւնների, որ այդ քննադատութիւնը մտքումս ծնեցրեց, և որ աւելի լաւ եմ համարում հրատարակել քան թէ լռել այսպիսի դէպքերում և թոյլ տալ որ „Շաւիղի" էջերն լցուին շարունակ այդպիսի (իմ կարծիքով) անարդար և անմիտ քննադատութիւններով ուղղուած դէպի մեր հասարակութեան մի դասին, որի պակասութիւնները իրանից անկախ պատճառներից ծագում են առել:

Պ. Յովսէփեանը կը բարեհաճէ մեզ տեղեկացնել թէ արդեօք քարոզիչն ո՞ր նիւթի վերայ աւելի խօսեց, եկեղեցու եօթն խորհուրդների՞ թէ ժողովրդի կօշիկների վերայ: Քարոզի բովանդակութիւնից, որը պ. Յովսէփեանը բարեհաճել է հրատարակել քահանայի խօսք դիալէկտով, և որին նմանելու համար բաւական զուր նեղութիւն պէտք է կրած լինի, երեւում է որ համեմատաբար աւելի կարճ ժամանակ է նուիրել ժողովուրդի կօշիկներին քան թէ իւր բնաբանին, եկեղեցու եօթն խորհուրդներին: Ուրեմն ցանկանում եմ իմանալ արդեօք ինչ նպատակաւ է պ. Յովսէփեանը ուղղում իւր կծու և ծաղրալից նկատողութիւնը քարոզչի այն գաղափարին, որի բովանդակութեանը նայելով, չնչին տեղ է բռնած եղել իւր քարոզումն և որն քարոզչի առանձին գաղափարը չէ, այլ հայաստանեայց և ուրիշ սախական քրիստոնէից եկեղեցիների պահանջն է իւր անդամներից: Մեծ փորձութիւն եմ զգում պարոնի այս ձեւի քննադատութեանը վերագրել մի առանձին խելթի որ նա կարող է ունեցած լինել դէպի այդ քահանան. որովհետև չեմ կարողանում ինձ համոզել որ պ. յօդուածագիրը գրել է ինչ որ ու-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԾԻՒՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԷԿԸ

(Առողջապահական նկատողութիւն)

—

Մանկավարժական գործով զբաղուողներից չկա մէկը որ չգիտենա, որ աշակերտները դասամիջոցի խաղից յետոյ վերադառնալով դասատուն ջրանի աչքով, վառուած դէմքով, կուրծքի անսպելի բարձրանալ-իջնելով դրամատիկ են լինում քննելու-յօդնածութիւնը կատարելու, քան թէ նոր ուժով դարձով դբաղուելու, ինչպէս փաստաբանումներ շատ միանգամից մանկավարժներ, ֆիզիօլոգիական ուժի տակ կրած նպաստը, Նորած ազդեցութիւնը այն աստիճանի յոգնեցուցիչ է, որ ուշիմ աշակերտն անգամ խաղից յետոյ մինչեւ չի վերադառնում իր հանգիստ դրութեանը, չի կարողանում ուսուցչի տուած հարցերին յագեցող պատասխան տալ: շատ անգամներ այդ խաղից (մանաւանդ սաստիկ) յետոյ դասամիտն միանգամ տեսել եմ աշակերտների գլուխները յենած սեղանին ուժագուրկ դրութեան պատճառով, անուշադիր ուսուցչի մտնելուն, անխօս անձէն կամենում են որքան կարելի է հանգստանալ. կարծես արհեստական կերպով ուզում են փոխել ֆիզիքականի ճնշումն մտաւորականի ճնշման. բայց յայտնի է, որ մէկ դրութիւնից միւսը փոխուելու, կամ ուղիղն ասած, թռչելու համար դարձեալ ներքին ֆիզիքական ոյժ է հարկաւոր, որը փոքրիկ ժամանակամիջոցում կատարուելով, աւելի մեծ յոգնումն է պահանջում հետեւաբար աւելի ծիւրիչ է քան սկզբնապատճառը: Մեր սեպհական դատողութիւնները թողնելով, մանաւանդ «Շաւիղի» փոքրիկ սիւնակները աչքի առաջ ունենալով, կամենում ենք մեր առաջարկած վերնագրի տակ կարդացած մէկ յօդուածի բովանդակութիւնը թարգմանաբար տալ ընթերցողներին առաւելապէս դաստիարակներին որոնք խաղի կողմը մնալով համոզուած, այնպիսի խաղեր թոյլ տան, որ մտաւոր եւ ֆիզիքական ոյժերի փոխադարձ օժանդակութիւնը չը խախտուի:

Ջղային հիւանդութեան նշանաւոր բժիշկ, ուսուցչապետ Կրաֆտ-Էբինգ ասում է. «մէկ ուսուցիչ, որին ես նրա ջղային թուլութեան պատճառով, խորհուրդ էի տուել օգտուելու թարմ օդից, 7—2ը դաս էր տալիս եւ ապա 3—9 ժամը զբաղւում էր մասերի վրայ: Այսպիսի փոփոխական կեանքի մէջ նորա հիւանդութիւնը աւելի սաստկացաւ, որովհետեւ առաւօտները ծանրաբեռնում էր իրան մտաւորականով, իսկ ճաշից յետոյ ֆիզիքականով»: Այսպիսի փոփոխական կեանք վարում են շատերը, որոնց ջղերը թէեւ թոյլ չեն, բայց ցանկանումն բնաւ չեն թարկուիլ այդ օրինակ հիւանդութեան, ուրիշ խօսքով նրանք նեղումն իրանց մարմինը, հոգիները թարմ պահելու համար, բայց չափից դուրս ջանալով դառնումն դարհուրելի թոյլ—ջղային: Ամենավատը այն է որ շատ ծնողներ, դաստիարակներ փոքրահասակ մանուկներին ստիպում են վարելու այդպիսի փոփոխական անկանոն կեանք: Մանուկների ջղայնութիւնը մեր փայլուն ժամանակի ամենամռայլ կողմն է: Կարծում են, իբրեւ թէ այդ ջղայնու-

